

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հենվելով երկու ժողովուրդների միջև բարեկամության պատմական արմատների վրա, հաշվի առնելով հայ-վրացական ավանդական կապերը,

գիտակցելով փոխադարձ շահագրգռվածությունը իրավահավասար համագործակցության մեջ, ձգտելով պահպանել և զարգացնել փոխշահավետ հարաբերությունները կրթության և գիտության ոլորտում,

ընդունելով իրենց փոխհարաբերություններում և հանրակրթական քաղաքականության մեջ համամարդկային արժեքների առաջնայնությունը,

դիտելով կրթության և գիտության պետական համակարգերը որպես արժեքային համակարգեր, որոնք նպաստում են երկու պետությունների քաղաքացիների լիարժեք զարգացմանը՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից, քաղաքական, կրոնական հայացքներից և համոզմունքներից,

արտահայտելով պատրաստակամություն գիտական, կազմակերպչամեթոդական և տեղեկատվական համագործակցության մեջ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, իրենց ազգային օրենսդրություններին և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, կզարգացնեն և կպահպանեն համագործակցությունը կրթության ոլորտում երկու պետությունների համապատասխան կազմակերպությունների և հաստատությունների միջև՝ իրավահավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա:

Հոդված 2

Կողմերը կհամախմբեն իրենց ջանքերը համագործակցության հետևյալ ուղղությունների վրա.

փորձի փոխանակում կրթության ոլորտում զարգացման, կառավարման և պլանավորման կարևորագույն բնագավառներում, այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտում,

մասնագետների պատրաստում՝ ուսանողների, ասպիրանտների, ստաժորների համարժեք փոխանակման հիման վրա, որոնք առաջնային են երկու Կողմերի համար,

գիտամանկավարժական կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում,

համատեղ գիտական հետազոտությունների իրականացում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հումանիտար, բնական, տեխնիկական, մանկավարժական գիտությունների և հատկապես երկու ժողովուրդների պատմական անցյալին վերաբերող ոլորտներում,

հումանիտար առարկաների գծով ուսումնական ծրագրերի և դասագրքերի բովանդակության համեմատում,

համագործակցության ընդլայնում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի մասնագետներին պատրաստելիս,

աջակցություն ուսումնական հաստատությունների միջև կապերի հաստատմանը և դրանց զարգացմանը միմյանց միջև անմիջական պայմանավորվածությունների հիման վրա:

Հոդված 3

Կողմերը պայմանավորվեցին կատարել անհրաժեշտ աշխատանք կրթության, որակավորման, գիտական աստիճանների և կոչումների մասին փաստաթղթերի ձևաչման հետ կապված հարցերը կարգավորելու համար:

Հոդված 4

Կողմերի դիվանագիտական ներկայացուցչությունների ծառայողների երեխաների ուսումնառության հարցը միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում քննարկվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին:

Հոդված 5

Կողմերը կարող են սահմանել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի քաղաքացիների, համապատասխանաբար, Վրաստանի և Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության պետական քվոտաներ: Ուսման համար վճարումը կիրականցվի ուղարկող Կողմի միջոցների հաշվին: Ընտրության, ընդունելության և

Ֆինանսավորման կարգը յուրաքանչյուր տարի որոշվում է առանձին արձանագրությամբ:

Հոդված 6

Կողմերից յուրաքանչյուրը չի առարկում մյուս Կողմի քաղաքացիների անհատական ընդունելությանը իր ուսումնական հաստատություններ՝ ընդունող Կողմի հաստատած կանոններին և ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգին համապատասխան:

Հոդված 7

Կողմերը կձգտեն կրթության բնագավառում միջազգային ծրագրերում և նախագծերում, սեմինարներին, գիտաժողովներին, դասախոսություններին և այլ միջոցառումներին գիտնականների համագործակցության ընդլայնմանը:

Հոդված 8

Կողմերը կաջակցեն բարձրագույն ուսումնական հաստատություններում հումանիտար, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառում մանկավարժական աշխատանքի համար մասնագետների փոխանակմանը, Հայաստանի Հանրապետության և Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Հոդված 9

Կողմերը կաջակցեն միջնակարգ և հանրակրթական դպրոցների, մասնագիտական տեխնիկական ուսումնարանների, բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը՝ հետևյալ ուղղություններով.

փորձի փոխանակում մանկավարժական գործունեության ոլորտում,

փորձի փոխանակում դասագրքերի և ծրագրերի, ուսումնական գործընթացի համակարգչավորման ծրագրերի մշակման ժամանակ,

գիտական տեղեկության փոխանակում,

համատեղ կրթական ծրագրերի մշակում,

մարզական պատվիրակությունների և գեղարվեստական ինքնագործ կոլեկտիվների փոխանակում,

ստեղծագործական նրցույթներ և առարկայական օլիմպիադաներ անցկացնելիս կապերի ընդլայնում,

փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ընդհանուր գիտահետազոտական աշխատանքների կատարում:

Սույն հոդվածի սահմաններում փոխանակումը կիրականացվի պայմանագրային հիմքով, իսկ դրա ծավալները կսահմանվեն յուրաքանչյուր տարի՝ համագործակցող հիմնարկների ղեկավարների կողմից:

Հոդված 10

Կողմերը կկատարեն պատվիրակությունների ամենամյա փոխանակումներ կապերի ամրապնդման, աշխատանքային փորձի փոխանակման, հետագա համագործակցության քննարկման նպատակով, ինչպես նաև սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված խորհրդակցությունների անցկացման և ամենամյա արձանագրության նախապատրաստման հարցերում, որում կձգգրտվեն համագործակցության տարբեր ոլորտներում համարժեք փոխանակման քվոտաները, ստաժավորման ֆինանսական և այլ պայմանները:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթների կատարման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 12

Անհրաժեշտության դեպքում, փոխադարձ համաձայնությամբ, Կողմերը կարող են լրացնել կամ փոփոխել սույն Համաձայնագիրը: Փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում 13-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն:

Հոդված 13

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարումը հաստատող վերջին ծանուցման օրվանից և կգործի հինգ տարվա ընթացքում: Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Կողմերից ոչ մեկը ժամկետը լրանալուց

վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չձանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի մայիսի 3-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման նպատակով օգտագործվում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի սեպտեմբերի 29-ից:.